

պ. Բ. Խալաթեանցին, որ և հաղորդում է՝ ընդհանրութեան հետեւալը. ցուցահանդէսը հետու է որևէ քաղաքական նպատակից, մեր նպատակն է Գերմանիայի մայրաքաղաքում 1903 թ. կաղմակերպել մի ցուցահանդէս, որով երևան գալ հալոց անցեալ և ներկայ կեանքի քաղաքակրթութիւնը:

Ցուցահանդիսի ծրագրում հետեւեալ բաժանմունքները կլինեն. I երկրի արդիւնաբերութիւնը. ա. հանքեր և մետաղներ, բ. նաւթ. գ. բամբակ. դ. բուրդ. ե. մետաքս զ. գինի և բմպելիք. է. չորացրած միւրք. ր. կաթնալին տնտեսութիւն թ. ձուկը. II. արուեստ և ձեռագործ. ա. անկուած, բ. գորգ և ալլն դ. ոսկեղէն իրեր. III. Հին և նոր արուեստ. ա. ճարտարապետութիւն և քանդակագործութիւն. բ. մոզաիկ գ. նկարչութիւն. IV. ազգագրութիւն. ա. ժողովրդական կեանք, գործունէութիւն և բնակարան. բ. զգեստ. գ. մտաւոր կեանք. առականեր, հեքիաթներ, երգեր և ալլն. V. Հալկական հնագիտութիւն. ա. դրամներ. բ. կնիքներ և ալլն. VI. Գրականութիւն և մամուլ. VII. Հալկական թատրոն (բեմի վրայ):

Մտադրութիւն կալ նոյնպէս ցուցահանդիսի միջոցին մի շարք դասախօսութիւններ կարդալ հալերի մասին և ալ չնպատակի համար կհրաւիրուեն լալտնի գիտնականներ և ճանապարհորդներ:

Նուիրատութիւններ կալելի է ուղարկել ցուցահանդիսի կազմակերպութեան համար հետեւեալ հասցեով. Berlin. Deutsche Bank (Behrenstrasse), Herrn Dr. P. Rohrbach und Dr. B. Chalatzianz. Իսկ իրերը պէտք է ուղարկել՝ Dr. B. Chalatziantz und Dr. F. Finck, Berlin, Kantstrasse 94.

Ցուցահանդիսի մասնաժողովի անդամներն են դր. Անդրէաս (իւրաւաբան) դր. Լիպսիուս (գերմանական արեւելեան առաքելութեան գիրեկտոր), պրոֆ. Պէլէնի (սանսկրիտագէտ), պրոֆ. Նդ. Մալէր (պատմաբան), պրոֆ. Գելդէր (արուեստագէտ), դր. Լեօլինֆէլդ (Շիւլէր թատրոնի գիրեկտոր), պրոֆ. Բէգիգէր (ազգագրական ընկերութեան նախագահ) և դր. Ֆինկ (լեզուագէտ և հալագէտ):

Յանկանում ենք լաջողութիւն:

## ՀԱՆԳ. ՄԵԼԻՔ ՍԱՓԱՐԵԱՆԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ ՆՈՒԻՐԱ- ԲԵՐՈՒԹԻՒՆ

Անցեալ Դեկտեմբերի վերջին Վարչալալում վախճանուելով երիտասարդ վաճառական Մելիք Սափաբեանցը բերուեցաւ Խազու, ուր և հողին լանձնուեցաւ. Հանգուցեալը բնիկ Շուշեցի էր, 33 տարեկան, իւր ուսումը ստացել էր տեղական թեմ. Դպրոցում և նուիրելով իրան վաճառականութեան՝ իւր



աչալուրջ գործունէութեամբ կարողացել էր մի համեստ դրամադուր կազմել և կենդանութեամբ գործ էր դնում ալն իւր չքաւոր ազգականներին ուսում տալու վերայ:

Հանգուցեալի լիշատակը լաւերժացնելու համար նորա Բողդան, Ներսէս, Մովսէս և Արմենակ եղբայրները նուիրեցին 3000 ռուբլի ի լիշատակ ս. Էջմիածնի 1600 ամեկի: Իսկ քեռին պ. Իսրայէլ Բէզլարեանցը հետեւեալ նուիրաբերութիւններն արեց Տ. Նիշէ ա. քահ. Գեղամեանցի միջոցով:

1, Շուշուալ հայոց թեմ. դպրոցին 1000 ռուբլի տոկոսով մի որդեգիր պահելու:

2, Շուշուալ ուէալական դպրոցին 1000 ռուբլի նոյն նպատակով՝ հալ լուսաւորչական զաւակներին:

3, Թաւրիզի կենդրոնական դպրոցին 1000 ռուբլի:

4, Մարդասիրական Ընկերութեան աշխատանքի տան 200 ռուբլի:

5, Շուշուալ Ղազանչեցւոց եկեղեցուն 200 ռուբլի:

6, Շուշուալ կուսանաց վանքին 100 ռուբլի:

և 7. Մի հատոր «Դիւան Հայոց պատմութեան» տպագրելու 500 ռուբլի:

### «ՏՄԸԱՋԸ» ԸՆԴՈՐՁԱԿ ԵՐԱԿՐՈՎ

Պ. Տիգրան Նազարեանի խմբագրութեամբ լուս տեսնող «Տարազ» շաբաթաթերթը ալս տարուանից առանձին փոփոխութեան է ենթարկուել, սկսել է հրատարակուել մեծ դիրքով և ճոխ ու հարուստ բովանդակութեամբ: Բացի դորանից ամեն համարին կցած է լինում սովորական պատկերազարդ առանձին լաւելուածը «Իլլիստրասիօն» վերնագրով: Մենք, որ հալ լրջմիտ մամուլի բարգաւաճման սիրահար ենք, կարող ենք շնորհաւորել «Տարազին» այդ լաւաջաղիմութիւնը:

### ՄՏԱԻՈՐ ՏՋՐՈՒԿԸ

Վերջին քաւորդ դարում մեր մէջ երեւան եկան մարդիկ, որոնք սխտեմատիքաբար ստի և կեղծի քարոզչութեան վարձապետ դարձած թունաւորեցին և թունաւորում են ժողովրդի հոգին: Այս դեռ մեծ ցաւ չէր լինի, որովհետեւ ամեն ազգի մէջ փուշ մարդիկ, ժողովրդի շահերի թշնամի և անգէտ մարդիկ կարող են լինել: Բայց ցաւն ալն է, որ մեր մէջ ալս տեսակ մարդիկ խօսում են լանուն ազգասիրութեան, լանուն գիտութեան, լանուն ազատամտութեան, և ալսպիսով մոլորեցնում միամիտ ժողովրդի միտքը որոշ դիտումներով: Սղուի-